

ՀԱՆԳԻՍՏ Տ. ՎԱՀԱՆ ՔԱՀԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ

1984 թ. սեպտեմբերի 19-ին վախճանվեց Ստեփանավան քաղաքի Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Վահան քահանա Մարգարյանը:

Հանգուցյալը ծնվել է 1921 թ. կեյթունցի ծնողներից Իրաքի մայրաքաղաք Բաղդադում: Այստեղից նրա ծնողները 1928 թ. տեղափոխվում են Կըրըկխան, որտեղ և նա ստանում է իր նախնական կրթությունը: Իր եկեղեցասիրության և բարեպաշտ ծառայության համար տեղի հայոց Ս. Աստվածածին եկեղեցում 1937 թ. ստանում է դպրի աստիճան՝ ձեռամբ հոգելույս Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյանի:

1938 թ. իր ծնողների հետ գաղթում է Հալեպ, որտեղ շարունակում է իր հայեցի կրթությունը և միաժամանակ զարգացնում իր կրոնա-եկեղեցական գիտելիքները:

1964 թ. Մարգարյանների ընտանիքը հայրենադարձվում է Սովետական Հայաստան և բնակություն հաստատում Կիրովական քաղաքում: Այստեղ նույն բարեպաշտական զգացումներով նա նվիրվում է առաքելական իր մայր Եկեղեցուն՝ երկու տարի անձնվիրությամբ ծառայելով տեղի Ս. Աստվածածին եկեղեցում:

1967—1972 թվականներին որպես սարկավագ նա շարունակում է իր ծառայությունը Ս. Գեղարդի վանքում:

1972 թվականին Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանի հրավերով տեղափոխվում է Շիրակի թեմ և քահանայական ձեռնադրություն ստանալով՝ աշխատանքի է նշանակվում Ստեփանավան քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում որպես տեղի հոգևոր հովիվ: Նորընծա քահանայի օծումը կատարվում է Լենինականի Ս. Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցում՝ ձեռամբ հոգելույս Տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի:

Հանգուցյալ Տեր հայրը մինչև իր մահը անձնվիրաբար և մեծ նվիրումով ծառայում է Ստեփանավան քաղաքում, իր սիրած համայնքի ծոցում:

1976 թ. Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը, Իր առաջին հովվապետական այցելության առթիվ Ստեփանավան, Տ. Վահան քահանային

շնորհում է քահանայական լանջախաչ կրելու իրավունք՝ ի գնահատություն երկար տարիների նրա նվիրյալ հոգևոր աշխատանքի:

Սիրված ու գնահատված քահանայի վերջին օծումը կատարվում է Կիրովական քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում, սեպտեմբերի 20-ին, հինգշաբթի օրը, ձեռամբ Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանի՝ ի ներկայության հանգուցյալի հարազատների, թեմի քահանայից դասի, թեմական խորհրդի անդամների, ինչպես նաև Կիրովականի և Ստեփանավանի եկեղեցիների վարչության անդամների ու հավատացյալ ժողովրդի:

Հանգուցյալ Տեր հոր աճյունը ամփոփվում է Կիրովականի քաղաքային գերեզմանատանը:

Խաղաղություն Տ. Վահան քահանայի հոգուն և հավերժական հանգիստ նրա ոսկորներին հայրենի հողում: